ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտի 2021 թվականի N 97 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ, ԱԿՆԱՂԲՅՈՒՐ ԵՎ ՎԱԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 1776- Ա հրամանը՝

որոշում եմ.

1. Հաստատել 2021 թվականի 2-րդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ, Ակնաղբյուր և Վազաշեն համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության բնագավառը, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 17-ի N ՍՊ/20.1/10461-20 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող հսկողության հարցաշարով:
3. Անհրաժեշտության դեպքում հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):
5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ համայնքում հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:
6. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ մինչև 2021 թվականի հունիսի 20-ը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
30 մարտի 2021 թվականի 97 -Ա որոշման

2021 թվականին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ, Ակնաղբյուր և Վազաշեն համայնքներում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| Հ/հ | Համայնքի անվանումը | Իրականացվելիք հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք հսկողության բնագավառ | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 1. | Այգեհովիտ | ապրիլի 14-16 | | Խմբի ղեկավար, | Թաթուլ Ստեփանյան |
| | | | ՏԻՄ լիազորություններ | Խմբի անդամ | Աղաբեկ Գալստյան, Հայկ Փաշինյան |
| | | | շրջակա միջավայրի պահպանություն, բուժսանիտարիա և անասնաբուժություն | Խմբի անդամ | Արկադի Ամիրխանյան |
| | | | առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն | Խմբի անդամ | Գուրգեն Հարությունյան |
| | | | արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն | Խմբի անդամ | Սամվել Սուքոյան |
| | | | ֆինանսներ | Խմբի անդամ | Ժորա Խաչատրյան |
| | | | քաղաքաշինություն | Խմբի անդամ | Միսակ Մելքումյան |
| | | | կոմունալ տնտեսություն | Խմբի անդամ | Արմեն Ճաղարյան |
| | | | հողաշինություն և հողօգտագործում | Խմբի անդամ | Համլետ Փիրումյան |
| | | | կրթություն, մշակույթ | Խմբի անդամ | Համիկ Խաչատուրյան, Մարինե Խաչատրյան |
| | | | առողջապահություն | Խմբի անդամ | Ռուբեն Տիգրանյան |
| | | | ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդություն | Խմբի անդամ | Արթուր Վանեսյան |
| | | | տրանսպորտ և ճանապարհաշինություն | Խմբի անդամ | Արտակ Սարգսյան |
| | | | սոցիալական պաշտպանություն | Խմբի անդամ | Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | Ակնաղբյուր | մայիսի 18-20 | ՏԻՄ լիազորություններ<br>շրջակա միջավայրի պահպանություն,<br>բուժսանիտարիա և անասնաբուժություն<br>առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն<br>արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն<br>ֆինանսներ<br>քաղաքաշինություն<br>հողաշինություն և հողօգտագործում<br>սոցիալական պաշտպանություն | Խմբի ղեկավար,<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br><br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ | Թաթուլ Ստեփանյան<br>Աղաբեկ Գալստյան, Հայկ Փաշինյան<br>Արկադի Ամիրխանյան<br><br>Գուրգեն Հարությունյան<br>Սամվել Սուքոյան<br>Ժորա Խաչատրյան<br>Միսակ Մելքումյան<br>Համլետ Փիրումյան<br>Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան |
| 3. | Վազաշեն | հունիսի 15-17 | ՏԻՄ լիազորություններ<br>շրջակա միջավայրի պահպանություն,<br>բուժսանիտարիա և անասնաբուժություն<br>առևտուր, ծառայություններ և զբոսաշրջություն<br>արտակարգ իրավիճակներ և պաշտպանություն<br>ֆինանսներ<br>քաղաքաշինություն<br>կոմունալ տնտեսություն<br>հողաշինություն և հողօգտագործում<br>կրթություն, մշակույթ<br>սոցիալական պաշտպանություն | Խմբի ղեկավար,<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br><br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ<br>Խմբի անդամ | Թաթուլ Ստեփանյան<br>Աղաբեկ Գալստյան, Հայկ Փաշինյան<br>Արկադի Ամիրխանյան<br><br>Գուրգեն Հարությունյան<br>Սամվել Սուքոյան<br>Ժորա Խաչատրյան<br>Միսակ Մելքումյան<br>Արմեն Ճաղարյան<br>Համլետ Փիրումյան<br>Համիկ Խաչատուրյան, Մարինե Խաչատրյան<br>Հարություն Քոչարյան, Նարինե Ճաղարյան |

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ